ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/47

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով քաղաքացի Վահե Երիջանյանի կողմից 27.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>Քաղաքացի Վահե Երիջանյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Քաղաքացի Վահե Երիջանյանը (այսուհետ՝ նաև բողոքաբեր) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 27.03.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Երևանի պետական համալսարան հիմնադրամի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման

քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Գալիմա» ՍՊԸ-ն, «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ն, «Նոր Ֆուդ» ՍՊԸ-ն, «Կառոլ» ՍՊԸ-ն, «Արտակ Հարությունյան» Ա/Ձ-ն, «Գանջալյան Եղբայրներ» ՍՊԸ-ն, «Գարդմեն» ՍՊԸ-ն և «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

Ցանկանում ենք նշել, որ գնման ընթացակարգին մասնակցել են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներ:

Ընթացակարգին մասնակցած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 14.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

-2-րդ կետի համաձայն՝ «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի և «Արտակ Հարությունյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

-3-րդ կետի համաձայն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայցված փաստաթղթերը չեն ներկայացվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան՝ հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև գնային առաջարկը ներկայացվել է սխալ՝ սահմանված մոդելի խախտմամբ:

-4-րդ կետի համաձայն՝ «Գարդմեն» ՍՊԸ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի հայտի ապահովման ամսաթիվը ներկայացվել է սխալով, էլեկտրոնային ստորագրության ամսաթիվը չի

համապատասխանում տուժանքի ամսաթվին: «Կառոլ» ՍՊԸ-ի հայտի ապահովման ամսաթիվը նույնպես ներկայացվել է սխալով, ինչպես նաև բացակայում է տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատող անձի լիազորագիրը (սույն կետով կայացված մնացած մերժման հետ համաձայն լինելու պատճառով չենք անդրադարձել դրանց հիմքերին):

- 5-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է մերժել վերը նշված մասնակիցների հայտերը:

Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ին և «Արտակ Հարությունյան» Ա/Ձ-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ վերը նշված մասնակիցները ճանաչվել է ընտրված՝ հաղթող մասնակիցներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև որ՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով.

1. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայցված փաստաթղթերը չեն ներկայացվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան՝ հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև գնային առաջարկը ներկայացվել է սխալ՝ սահմանված մոդելի խախտմամբ:

2. Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետը հստակ սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները հայտի փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, իսկ «Ֆոտոն» ՍՊԸ-ն, հանդիսանալով ՀՀ ոչ ռեզիդենտ՝ գործել է հանձնաժողովի կողմից վկայակոչված օրենսդրական նորմերով և հայտը ներկայացրել է բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ինչ վերաբերում է վերը նշված մասնակցի կողմից գնային առաջարկը սահմանված մոդելին սխալ ներկայացված լինելու հանձնաժողովի պնդմանը, ապա հայտնում ենք, որ զարմանալի և անհասկանալի է, թե ի՞նչ սխալ է հայտնաբերել Պատվիրատուի հանձնաժողովը գնային առաջարկում: Գնային առաջարկը կազմված է եղել մի քանի էջից, որը լիովին համապատասխանել է ընթացակարգի հրավերով նախատեսված օրինակելի ձևի և մոդելի պահանջներին:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Գարդմեն» ՍՊԸ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի հայտի ապահովման ամսաթիվը ներկայացվել է սխալով, էլեկտրոնային ստորագրության ամսաթիվը չի համապատասխանում տուժանքի ամսաթվին:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը այս դեպքում ևս գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Գարդմեն» ՍՊԸ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի հայտի ապահովման ամսաթիվը համընկնում է մասնակիցների կողմից www.armeps.am միջոցով ուղարկված էլեկտրոնային հայտի ներկայացման օրվա հետ, իսկ հայտերի ստորագրության ամսաթիվը չի կարող որևէ էական դեր խաղալ այս պարագայում, քանի որ հայտը ապահովումը՝ տուժանքը գործում է հայտը ներկայացնելու օրվանից սկսված, իսկ մասնակիցների, ինչպես արդեն նշվեց, հայտը ուղարկելու և հայտի ապահովման մեջ նշված ամսաթիվը նույնն են: Պատվիրատուն պետք է նկատի ունենա, որ դա նույնն է, ինչ մասնակիցը ուղղակի ստորագրում և կնիքում է փաստաթղթերը, իսկ այս պարագայում Պատվիրատուն չէր ստուգելու, թե երբ է մասնակիցը ստորագրել հայտը: Էլեկտրոնային ստորագրությունը դա նույնն է, ինչ սովորական ստորագրությունը՝ ուղղակի էլեկտրոնային տարբերակով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Կարոլ» ՍՊԸ-ի հայտի ապահովման ամսաթիվը նույնպես ներկայացվել է սխալով, ինչպես նաև բացակայում է տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատող անձի լիազորագիրը:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը այս դեպքում ևս գործել է ոչ իրավաչափ, քանի որ հայտի ապահովման ամսաթվի մասով արդեն ներկաայցվել են հիմնավորումները:

Ինչ վերաբերում է տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատող անձի լիազորագրի բացակայությունը, ապա Պատվիրատուի հանձնաժողովը այս պարագայում պետք է առաջնորդվեր Կարգի 41-րդ կետի պահանջներով և արձանագրելով անհամապատասխանություն, պետք է կասեցներ նիստը և շտկելու հնարավորություն տար մասնակցին, քանի որ հայտի լիոզորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար:

Վերոգրյալից ելնելով, գտնում ենք, որ Երևանի պետական համալսարան հիմնադրամի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ

հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով սահմանված պահանջները»:

Ելնելով վորոգրյալից՝ բողոքաբերը Բողոքով խորհրդին խնդրել է պարտավորոցնել Երևանի պետական համալսարան հիմնադրամի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել նույն հանձնաժողովի 14.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ, 20.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված բոլոր որոշումները և պարտավորեցնել նորից գնահատել մասնակիցների հայտերը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էր բողոքաբերը՝ քաղաքացի Վահե Երիջանյանը:

2. «ԵՊՀ» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«ԵՊՀ» հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.03.2018թ. գրությամբ քաղաքացի Վահե Երիջանյանը կողմից 27.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««ԵՊՀ» Հիմնադրամի «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժովը հայտերի գնահատումը իրականացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ սահմանված կարգով և ներկայացված բողոքը համարում է անհիմն: Իսկ նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին: Ելնելով իրեն վերապահված իրավունքներից, գնահատող հանձնաժողովը չէր կարող հայտի ապահովման և գնային առաջարկի մեջ թույլ տված սխալները համարել բավարար»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Ալլա Մակարյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն ուսումնասիրել է քաղաքացի Վահե Երիջանյանի կողմից 27.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 14.03.2018թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի N 2 և 16.03.2018թ. նիստի N2-1 արձանագրությունները, «Գալիմա» ՍՊԸ-ի, «Գարդմեն» ՍՊԸ-ի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի, «Կարոլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի պատճենները, Պատվիրատուի 30.03.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը և կարծիքը.

«ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ մասնակցության հայտեր են ներկայացրել «Գալիմա» ՍՊԸ-ն, «Գարդմեն» ՍՊԸ-ն, «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Կարոլ» ՍՊԸ-ն, ինչպես նաև «Անգին Հարությունյան» ԱՁ-ն, «Նոր Ֆուդ» ՍՊԸ-ն, «Արտակ Հակոբյան» ԱՁ-ն և «Գանջալյան Եղբայրներ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը՝ 14.03.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած հայտերի բացման նիստի N 2 արձանագրության՝

- 1.3 կետով արձանագրել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայցված փաստաթղթերը չեն ներկայացվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան՝ հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև գնային առաջարկը ներկայացվել է սխալ՝ սահմանված մոդելի խախտմամբ.

- 1.4 կետով արձանագրել է, որ «Գարդմեն» ՍՊԸ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի հայտի ապահովման ամսաթիվը ներկայացվել է սխալով, էլեկտրոնային ստորագրության ամսաթիվը չի համապատասխանում տուժանքի ամսաթվին, իսկ փաստաթուղթը համարվում է վավեր համակարգ հայտ ներկայացնելու օրվանից: «Կառոլ» ՍՊԸ-ի հայտի ապահովման ամսաթիվը նույնպես ներկայացվել է սխալով, ինչպես նաև բացակայում է տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատող անձի լիազորագիրը (սույն կետով կայացված մնացած մերժման հետ համաձայն լինելու պատճառով չենք անդրադարձել դրանց հիմքերին):

- 1.5 կետով Հանձնաժողովը որոշել է «Գալիմա» ՍՊԸ-ի, «Գարդմեն» ՍՊԸ-ի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի, «Կարոլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը ճանաչել Հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել:

Այնուհետև, Հանձնաժողովը 16.03.2018թ. նիստի N2-1 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Հանձնաժողովը «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը գնահատելու ժամանակ էլեկտրոնային թվային ստորագրության սխալ լինելու մասով թույլ է տվել վրիպակ՝ ոչ ռեզիդենտ լինելու դեպքում էլեկտրոնային ստորագրության բացակայությունը համարելով սխալ, սակայն ճշգրտման արդյունքում հանձնաժողովը որոշեց այդ մասով հայտը համարել բավարար: Սակայն ընկերության գնային առաջարկը ներկայացվել է սահմանված մոդելի խախտմամբ և հայտը ճանաչվել է հրավերի պահանջներին անհամապատասխան: Մասնավորապես, մասնակիցը գնային առաջարկ ներկայացրել է մի շարք չափաբաժինների մասով, սակայն համակարգ գնային առաջարկը մուտք է արել մաս-մաս, և բացի 1-ից 8-րդ չափաբաժիններից, առանձին էջերում գնային առաջարկի ծածկագիրը, ընթացակարգը և օրինակելի ձևով պահանջվող այլ տեղեկատվությունները բացակայում են, ուստի նման կերպ չի երևում, թե որ մրցույթի որ չափաբաժնի մասին է խոսքը:

Քաղաքացի Վահե Երիջանյանը Խորհրդին ներկայացրած բողոքով անդրադարձել է Հանձնաժողովի 14.03.2018թ. և 16.03.2018թ. տեղի ունեցած նիստերի արձանագրություններով արձանագրված գնահատման արդյունքներին՝ առանձին-առանձին և եզրակացրել, որ Երևանի պետական համալսարան հիմնադրամի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Հանձնաժողովի կողմից «Գալիմա» ՍՊԸ-ի, «Գարդմեն» ՍՊԸ-ի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի, «Կարոլ» ՍՊԸ-ի հայտերի գնահատումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով սահմանված պահանջների խախտմամբ:

Բողոքի քննության նպատակով 30.03.2018թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց 30.03.2018թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը և կարծիքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

• 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

• 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը վավեր է մինչև նույն օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

• 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ, իսկ «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:

• 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 25-ի թիվ 250-Ա հրամանով հաստատվել են գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը, այդ թվում մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկի (հավելված 5) և տուժանքի մասին համաձայնագրի (հավելված 8) օրինակելի հավելվածները:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի, «Գալիմա» ՍՊԸ-ի, «Գարդմեն» ՍՊԸ-ի և «Կարոլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, արձանագրում է.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտի մասով.

- Հրավերի N1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումով «Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է ԼՂՀ ռեզիդենտ.

- «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը ներկայացվել են հաստատված և կնիքված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

2. «Գարդմեն» ՍՊԸ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի հայտերի մասով.

- «Գարդմեն» ՍՊԸ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի վերին հատվածում նշված է 14.03.2018թ. իսկ էլեկտրոնային թվային ստորագրության մեջ պարունակվող ամսաթիվը այլ է՝ 13.03.2018թ., որպիսի հանգամանքը Հանձնաժողովի կողմից որակվել է որպես Հրավերի պահանջին անհամապատասխանություն:

3. «Կարոլ» ՍՊԸ-ի հայտի մասով.

- «Կարոլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հրավերի N1 հավելվածի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումի համաձայն՝ որպես ընկերության տնօրեն նշված է Թ. Իսպիրյանը, մինչդեռ ընկերության հայտը կազմող փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը և տուժանքի մասին համաձայնագիրը, ստորագրված են Լիլիա Դավթյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ.

- «Կարոլ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ընկերության տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած անձին տրված լիազորագիրը:

- «Կարոլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի վերին հատվածում նշված է 13.03.2018թ., իսկ էլեկտրոնային թվային ստորագրության մեջ պարունակվող ամսաթիվը՝ 14.03.2018թ.:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 321-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

- 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ.

- «Ֆոտոն» ՍՊԸ-ն՝ հանդիսանալով ՀՀ ոչ ռեզիդենտ և փաստաթղթերը ներկայացնելով հաստատված և կնիքված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, գործել է Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված կարգով: Միաժամանակ, Խորհուրդը, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ մի քանի էջից կազմված գնային առաջարկը, գտնում է, որ այն համապատասխանել է ընթացակարգի հրավերով նախատեսված օրինակելի ձևի պահանջներին: Հետևաբար, Հանձնաժողովը, «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

- Քանի որ «Գարդմեն» ՍՊԸ-ի, «Գալիմա» ՍՊԸ-ի և «Կարոլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման ամսաթիվը համընկնում է մասնակիցների կողմից www.armeps.am միջոցով ուղարկված էլեկտրոնային հայտի ներկայացման օրվա հետ, իսկ տուժանքը գործում է հայտը ներկայացնելու օրվանից սկսված, ուստի Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը, «Գարդմեն» ՍՊԸ-ի, «Գալիմա» ՍՊԸ-ի և «Կարոլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը անբավարար գնահատելով և նշված մասնակիցների հայտերն այդ հիմնավորմամբ մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

- Ինչ վերաբերում է քաղաքացի Վահե Երիջանյանի կողմից ներկայացված այն փաստարկին, որ «Կարոլ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատող անձին տրված լիազորագրի բացակայությունն արձանագրելուց հետո Հանձնաժողովը պարտավոր էր ղեկավարվել Կարգի 41-րդ կետի պահանջով և անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տրամադրել «Կարոլ» ՍՊԸ-ին, ապա Խորհուրդը նման փաստարկն անհիմն է համարում և գտնում է, որ հայտում ներառված փաստաթղթերը ստորագրելու լիոզորությունը հավաստող փաստաթուղթը՝

լիազորագիրը չի հանդիսանում Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ մասնակցի հայտի փաստաթուղթ, ուստի վերջինիս նկատմամբ Կարգի 41-րդ կետով նախատեսված՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տրամադրելու պահանջը կիրառելի չէ: Հետևաբար, Հանձնաժողովը, «Կարոլ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի 14.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 և 20.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրություններով՝ բացի «Գալիմա» ՍՊԸ-ի, «Գարդմեն» ՍՊԸ-ի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի և «Կարոլ» ՍՊԸ-ի հայտերի գնահատման արդյունքներից, ամրագրված են նաև Ընթացակարգի այլ մասնակիցների («Անգին Հարությունյան» ԱՁ, «Նոր Ֆուդ» ՍՊԸ, «Արտակ Հակոբյան» ԱՁ, «Գանջալյան Եղբայրներ» ՍՊԸ) հայտերի գնահատման արդյունքները, ուստի Խորհուրդը գտնում է, որ բողոքաբերի կողմից ներկայացված պահանջը՝ պարտավորոցնել ԵՊՀ հիմնադրամի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել վերը նշված արձանագրություններով կայացված բոլոր որոշումները և պարտավորեցնել նորից գնահատել մասնակիցների հայտերը, անհիմն է:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Վահե Երիջանյանի կողմից 27.03.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**